# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՑ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| Առաջարկների հարցման առարկան | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Պռոշյան համայնք 5-րդ փողոց, 12-րդ նրբանցք, 1-ին տուն հասցեում գտնվող՝ «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի տարածքի ոռոգման համակարգի օժանդակ շինությունների կառուցում և բաքերի տեղադրում: |
| Առաջարկների հարցման ծածկագիրը | ICARE- 046/AM/22 |
| Պատվիրատու | Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն հիմնադրամ (ICARE): |
| Պատվիրատուի գտնվելու վայրը | Տերյան 74, Երևան 0009 |
| Հեռ. | +374 77 72 79 40 |
| Պատասխանատու անձ | Կարեն Չախոյան |
| Բաց առաջարկների հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով: | |
| Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի ցանկացած ժամանակ երկարաձգելու առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը, համապատասխանաբար հետաձգելով հայտերի բացման նիստի անցկացման ամսաթիվն ու ժամը, մինչև առաջարկների հարցմանը մասնակցելու՝ հայտերի ներկայացման ժամկետի ավարտը, ինչպես նաև ցանկացած ժամանակ ծանուցման ու առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթերի մեջ կատարելու փոփոխություններ: | |
| Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու առաջարկների հարցում անցկացնելուց և ավարտելու այդ գործընթացը, առանց առաջարկների հարցման արդյունքներով՝ պայմանագիր կնքելուց, ընդ որում Պատվիրատուն չի հատուցում մասնակցի կողմից կատարված ծախսերը: | |
| Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի փոփոխելու մասնակիցների առաջարկների դիտարկման և առաջարկների հարցման արդյունքների ամփոփման վայրը և ամսաթիվը: | |
| Մասնակիցը կարող է փոփոխել, լրացնել կամ հետ կանչել առաջարկների հարցմանը մասնակցելու իր հայտը այն ներկայացնելուց հետո այն պայմանով, որ Կազմակերպիչը ստանա գրավոր ծանուցում առաջարկի փոփոխման, լրացման կամ հետ կանչման վերաբերյալ, մինչև առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթերում սահմանված՝ առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը: | |
| **Պաշտոնական կայքը , որտեղ տեղադրված է Առաջարկների հարցման փաստաթղթերը** | https://icare.am/tenderannouncements/ |
| **Առաջարկների հարցման հայտերի ներկայացման վերջնաժամկետը, օրը, ժամը և վայրը** | Առաջարկների հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային տարբերակով՝ փակ ծրարով, մինչև 19.09.2022թ.-ի ժամը 18:00-ը, ք. Երևան, Տերյան 74 հասցե, 4-րդ հարկ «Ագրոբիզնեսի հետազոտությունների և |

| | |
|---|---|
| | կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ |
| **Առաջարկների հարցման հայտերի բացման նիստի վայրը, օրը և ժամը** | ք.Երևան, Տերյան 74, 5-րդ հարկ «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ 20.09.2022թ. ժամը 11:00 |

Առաջարկների հարցումը չի հանդիսանում սակարկություն (մրցույթ, աճուրդ) կամ հրապարակային մրցույթ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-465 և 1043-1047 հոդվածներին համապատասխան և Պատվիրատուի (Կազմակերպչի) վրա չի դնում պարտավորություններ, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածներով:

Հայտարարության սույն տեքստը հաստատված է մրցույթային գնահատող հանձնաժողովի 2022 թվականի Օգոստոսի 2-ի թիվ «1» որոշմամբ